ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2024 թվականի N: 13 - Ա ք.Գյումրի

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Կարեն Հովհաննիսյանի 2024 թվականի հունվարի 9-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աղվորիկի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարեն Հովհաննիսյանին տրամադրել 25 աշխատանքային օր ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2024 թվականի հունվարի 16-ից մինչև փետրվարի 19-ը ներառյալ:

2. Կարեն Հովհաննիսյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աղվորիկի հիմնական դպրոց» պետական ոչ

առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել նույն կազմակերպության աշխարհագրության ուսուցիչ Մարիամ Խաչատրյանին:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է